Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 529 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ա. Գրիգորյանի անվան Ծիծեռնակ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների սոցիալական պայմանները բարելավելու նպատակով նախատեսվում է մանկական խաղահրապարակի տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքքս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, (6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես)
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքքս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, (քաղ. Երևան, Վիկտոր Համբարձումյան 2-րդ շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի Չարենցավան բնակավայր, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	2,538,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի «Չարենցավան համայնքի Ա. Գրիգորյանի անվան Ծիծեռնակ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի «Չարենցավան համայնքի Ա. Գրիգորյանի անվան Ծիծեռնակ մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տարածքում տեղադրվելու է խաղասարքեր: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 2,538,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խաղահրապարակների սարքավորումների պատրաստման, մատակարարման և տեղադրման և առկա սարքավորումների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,538,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ